երբ իմացաւ թէ Դաւոն ամբողջովին քրդաբնակ դարձեր է, հառաչեց, յիշեց իւր հօր տան հարստութիւնը և հացը։

Պեռէի Սրգէի տնէն աղքատ մի վիճակի մէջ կը բնակէր ի Ղայաբէկ, սա լսեց և մինչև Կարին եւս գնաց, որ օգնութիւն մի ստանայ, սակայն չհասաւ։

Այս գիւղի Սահրատի տուն եւս իւր հացով մեծ համբաւ հանած էր։

Սահրատ նոյն ժամանակի յԱլաշկերտ իշխանութիւն վարող Մահմուտ բէկի, որ շատ հայասէր էր, սիրելին և հաւատարիմն էր։

Երբ Մահմուտ ընդհանուր իշխանութեան բարձրացաւ ի Պայազիտ, երկար միջոց եւս Սահրատի պատիւը կը պահէր, նորա ամէն կերպով կը վարձատրէր։

Մահմուտ փաշի ազգականներէն մին Խալիլ, որ Մահմուտի հետ լաւ չէր, մի կերպով Ալաշկերտի մասնաւոր իշխանութիւնը ձեռք կը ձգէ։

Մահմուտի և Խալիլի գժտութիւնը օր քան զօր սաստկացաւ. Մահմուտի զօրութիւնը շատ լինելուն նեղը լծեց Խալիլը և շատ ջանաներ հասուց նմա. Խալիլ տեսնելով որ Մահմուտի չէ կարող ջնասել՝ նորա հաւատարիմ մարդիկներուն ձեռք զարկաւ. կալանաւորեց մի քանի երևելի քրդեր, որոց հետ եւս Սահրատն։

Մահմուտ նախապէս՝ որպէս քանի քրդերու՝ նոյնպէս Սահրատին լուր յղեց, որ իւր ընտանեօք խոյս տայ ի Պայազիտ կամ Դիատին, որպէս զի Խալիլի անգթութեան չմատնուի։ Քրդերու մեծ մասն ապաստան գտած էին ի Պայազիտ, իսկ Սահրատ յոյսը դրած էր իւր